փլուցանէ զմասն ինչ պարութիւնային մնացելոյ ողջ յառաջնում նուագի և մնան ի ներքոյ նորա ի գործաւորաց և ի չինողաց անտի ոգիք իբր 250. և ընդ ամենայն մեռեալք ի գետնաշարժէ ոմանք ասեն 3000, ոմանք 4000 և ոմանք աւելի. չատ լիցի ասեն եթէ յետ 20 ամի մեծ ինչ է թէ եկեսցէ յառաջին աստիճան, որպէս ասեն ամենեքեան։...

1766 յունիս 21
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Մեսրոպ վրդպ. Մխիթարեան

## ՄԿԴ.

*Քանի մը կարճառօտ լուրեր զանազան աղէտներու և դէպքերու։*

*Գերապատիւ և Գերայարգ Տեառն Տեառն Ստեփաննոս վարդապետի*
*Աբբայ հօր մերոյ ողջոյն աչառնամբոյր*

... յաւուրս յայսոսիկ օգոստ. 5 յաւուր երեքշաբթի մօտ ի կէս աւուրն... եղև սասանութիւն մեծ երկրորդ առաջին մեծագունին... ոչ միայն սասանութիւն երկրի եղև յաւուրս յայսոսիկ, այլ և որոտալ երկնից և թօթափիլ կայծականց արտաքոյ քան զսովորականն, և զի բնակիչք տեղւոյս չեն այնչափ տեսեալ զայնպիսիս, բազումք որք ապրեցան յերկիւղէ սասանութեանն մնասեցան յերկիւղէ կայծականց, թող զհարեալսն ի կայծակնէ։... Ժանտամահն տակաւին չէ զօրացեալ, սակայն սկսաւ ծայր տալ աստ և անդ, այլ յանցեալ ամին յառաջիկայ ժամանակիս զօրացեալ էր յոյժ...։ Յաւուրս յայսոսիկ իշխանն Կիպրոսի ապստամբեաց ի թագաւորէն, և զպարգևսն որ գայր թագաւորին ի դամասկոսէ զանձս իբրև հարիւր հազարի յափշտակեցին ի ճանապարհին, և ասեն թէ այն ևս ի ձեռն իշխանին կիպրոսի եղեալ իցէ. և աստի ի թագաւորէն գնացին և պաշարեցին զկիպրոս, և զամենայն արուարձանս նորա անցուցին ի սուր սուսերի, յառնէ մինչև ցկին, ի փոքրկանց մինչև ի մեծամեծս, այլ զամրոցն տակաւին ոչ կարացին առնուլ, այլ հատին զանցս ջրոցն. և ճաֆէր պէյն պատերազմեալ նաւու կալաւ նաւս ինչ իշխանին կիպրոսի զորս ինքնագլխութեամբ արկեալ էր նորա ի ջուր։ Ընկալայ և զոսկի տալոյ կանոն Հ. Դաւթի Պողոսեան, կրօնաւորի Մխիթարեան, այսպէս գրեցի, զի նա այսպէս ոտիւք չափեալ է զստորագրութիւն իւր ի կանոնին. չնորհ ունիմ զաշխատասիրութենէն...։

Յամի տեառն 1766
Օգոստ. 15
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Անանիա վրդպ. Մ[խիթարեան]

## ՄԿԵ.

*Եր. Տէր Կոմիտասայ մեծ համբաւին պատկանող փոքրիկ տեղեկութիւն մը։*

*Գերյարգելի Տեառն Տեառն Ստեփաննոսի մեծի վարդապետի*
*և արժանաւոր Աբբայի Մխիթարեան միաբանի խնդալ ի քրիստոս յիսուս*

Ճանաչելով զիս իբրև փրկեալ և ազատլամայ վերոյգրեալ Գ. Հ. ի կապանաց միսսիոնարութեան՝ ոչ պակասիմ ի չնորհակալ լինելոյ զխնամոց չնորհաց Գ. Հ. որով երջանկապէս ազատ գրեալ, և չուեալ ի Վարատինոյ գնացի ի յԻլվով առ ի տեսանել